ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԵՎԵԼՅԱՆ

Պատասխանատու Յովհաննէս Փիլիճեան

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻՈՅ

Նամակքն ուղղելի են առ Ղ. Գ. Պայդզարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԶՄԻՒՌՆԻԱ ՇԱԲԱԹ 29 ՄԱՐՏ 1880 — ԹԻՒ 1141

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ։ Խորհրդարանի անդամոց ընտրական գործողութեանց մասին բազմատեսակ խորհրդածութիւններով լի են եւրոպական լրագիրք։ Գլխաւորաբար միսար Կլէտսթոնի և լորդ Պիքոնսֆիլդի վրայ կը շրջին այս ամեն խորհրդածութիւնք։ Միսար Կլէտսթոն ազատական կուսակցութեան դլուխն անցած՝ Թագուհւոյն կառավարութեան արարքն խիստ պարսաւանօք կը մեկնէ։ Միւս կողմանէ լորդ Պիքոնսֆիլդի համախոհք, և բոլոր պահպանողական կուսակցութեան վերաբերեալ անձինք միսար Կլէտսթոնի այժմեան ընթացքը կը պարսաւեն։ Սակայն ինչպէս հեռագիրք կ'իմացնեն, շատ մեծ հաւանականութիւն կայ որ ազատական կուսակցութիւնն յաղթանակը տանի։ քանզի ցարդ եղած ընտրութեանց մէջ ազատականք աւելի թիւ շահեցան քան պահպանողականք։

ԴԱՂԼԻԱ։ Հանրապետական թերթերն ցաւ կոյսյանեն Դաղլիոյ և Ռուսիոյ տէրութեանց մէջ ինկած ցրտութեան համար, որ ծագումն առած է, կ'ըսեն, Հարթման եղեռնագործը, որ Մոսկուայի երկաթուղւոյն վրայ կայսեր դէմ փորձուած դաւաճանութեան հեղինակ կը համարուի, մինչև ցարդ Ռուսիոյ կառավարութիւնք չյանձնուելէն, որու վրայ ի՞նչնալ կառավարութիւնն մեծապէս դժգոհած է։ Շատերը կը կարծեն թէ՝ սոյն դժգոհութեան հետևանքն է Բարիզի Ռուսական դեսպան Օրլոֆ իշխանին մեկնիլը։ ինչպէս և կը յուսացուի թէ՝ Բէդրսպուրկի գաղղիական դեսպան Շանզի զօրավարն ևս Բէդրսպուրկէն մեկնի։

ԲՐՈՒՕԻԱ։ Տէյլի Նիուզ Բէդրսպուրկէն հեռագրուած հետևեալ լուրը կը հրատարակէ։ Կիսմ կայսրն իւր առ Զարն ուղղած վերջին նամակին մէջ հանդիսապէս յայտարարած է թէ՝ իւր նշխարեալ կենաց մէջ բնաւ պատերազմի վճիռ մի չպիտի վաւերացնէ այս երկու տէրութեանց մէջ։ և թէ՝ գիտելով որ թերևս շատ երկար ատրիներ չմնան այլևս իրեն ապրելու, իր որդի գահաժառանգ իշխանէն պատուոյ խոստում առած է որ պարտաւոր է նա ևս սոյն ուխտին հաւատարիմ մնալ քանի որ կենդանի է Զարն։ Թէև Պիզմարք իշխանի Պերլին գտնուող մի քանի դեսպաններու ուղղած խօսքը թէ՝ «առայժմ Ռուսիոյ և Գերմանիոյ մէջ դժտութեան ուղղակի պատճառ մի չկայ», հաստատեալ կուգայ Տէյլի Նիուզի հրատարակած հեռագրի իմաստին, սակայն գերմանական լրագրի մը հետևեալ ժողովրդական խօսքը եթէ ստոյգ է, թերևս կարող լինի կասկածելի դարձուցանել կայսերական այդ ուխտին՝ ապագայի մէջ գործադրութիւնը։ Ցիշեալ լրագրի խօսքն է. «եթէ մեր կառավարութիւնք Ռուսիոյ դէմ պատերազմ բանալ չկամենայ. մեք ինքնին կը բանամք պատերազմը։»

ՐՈՒՄԱՆԻԱ։ Աւստրիոյ նախարար Պ. Պրաթիանոյի դրացի մեծ տէրութեանց մայրաքաղաքները ըրած ուղևորութեան մեծ նշանակութիւն կուտան լրագիրներէն ոմանք, և արդարև կարևորութիւն ունեցող կէտ մի է։ Ռումանիա, որ քաղաքական ասպարէզին առջև սակաւ ժամանակի մէջ հոկայ քայլեր առաւ, և որ վերջին պատերազմին առթիւ իւր անկախութիւնն իսկ ստացաւ, և այն իւր ազգային ներքին զարգացման շնորհիւ. այժմ ազգային փառասիրութեամբ կը ձգտի աւելի մեծ քայլմի ևս առնուլ այն է՝ արդի անկախ իշխանութեան դիրքն ու հանգամանքն թագաւորութեան վերածել։ Սոյն նպատակին ժամանելու համար ինչ կարևոր միջոցներ որ պէտք են, արդէն Ռումանիա ի ներքուստ կը տածէ զանոնք. սակայն դեսպանական տեսակէտով նայելով՝ այդ ամեն ներքին զարգացման և զօրութեան միջոցներն ինքնին բաւական չլինելով; հարկ է նաև ուրիշ տէրութեանց, մանաւանդ իրեն մերձաւորաց հաւանութեանն արժանանալ. որ այնքան դիւրաւորին կ'երևի որքան մեծ տէրութիւններն եւրոպական հաւասարակշռութեան նախանձախնդիր կը մնան։ Մանաւանդ Ռումանիոյ նման երկրի մը համար, որ իւր ներքին զարգացումէ, արդէն ինքզինքն կառավարելու ընդելացեալ վարժութենէ, թէև փոքրագիր՝ այլ մշտապատրաստ և արիւն բանակ մ'ունելէ զատ. Եւրոպիոյ միջավայրին մէջ 5 միլիոն բնակչաց կարևոր դիրք մի ունեցող երկիր է։ Եւ ահա այսպիսի փոքրիկ և ծանրակշիռ նպատակ մի ունի Պ. Պրաթիանոյի ուղևորութիւնն, որ անշուշտ կրնայ արդիւնաւոր վախճան մի առնուլ եթէ Ռումանական իշխանութեան պետական անձինք ևս յայտնին անվրէպ ուղղութիւն մի տալ ազգային շարժման, և յարատևեն իսկ երկրին բնական զարգացման միջոցներն իրացնելու։ Այս ևս տարակուսական չէ քանի որ ունին այնպիսի պետական անձինք՝ որոց սուր խոհակաութիւնն ու հայրենասիրական ոգին սակաւ ժամանակի մէջ այսչափ գոհացուցիչ արդիւնք յառաջ բերին իրենց հայրենեաց։

—Յունական խնդրոյն համար նոր կազմուելիք գիտական յանձնաժողովոյ մէջ, որ պաշտօն պիտի ունենայ Թուրքս—Յունական սահմանագիծը որոշել, Բ. Դուռն ալ պահանջեր էր որ իր կողմանէ փոխանորդ մը ունենայ նոյն յանձնաժողովոյ մէջ. սոյն պահանջումը տէրութեանց մէկ քանին չ'են ընդունած։ Պ. Ֆէլի լրագիրը այնպէս կը կարծէ թէ Անգլիոյ դեսպան վսեմ. Հ. Լէյըրտ ծանուցագրով մը Բ. Դրան իմացուցած է տէրութեանց մերժումը։ Անգլիան ալ այս մերժման ժամանակիս է եղեր։

Ընկերութիւն մը առաջարկած է Բ. Դրան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՐԱՆՏ ԵՒ ԲԷՊԻՔԷ.

Վ.Է.Պ ՊՂԲԵՐԳԱԿԱՆ(1)

Պարսկաստանի նախնի թագաւորաց մէջ Սուլէյման ամենէ աւելի հզօրն ու անգուրթն էր։ Ասիկա արու և էգ զաւակներ ունեցաւ իր Սէլինա կնոջմէն, որ ուրիշներու հետ բազդատելով ազնուագոյն կին մ'էր։ Թագաւորը իր սոյն կինը իր մեծ որդիին հետ մէկտեղ անհամեստութեան մի պատճառաւ սպաննած էր։ Միւս ամեն զաւակներն ևս մեռնելով մնացած էր իրեն միակ ազջիկ մի անունը Բէպիքէ. օրիորդ չափահաս, և ամենագեղեցիկ և ամենուն սիրելի։ Անիկա իր հօրը սիրոյ մէկ հատիկ և կեանքէն աւելի անոյշ առարկաներ, մինչ զի հայրը իր բոլոր յոյսը անոր վրայ էր դրած։ Զկար բան մի՝ որչափ և դժուարին՝ որ հայրը չկատարէր ի շնորհս իւր սոյն ազջկան. որով շատ անգամ հօրը անգթութիւնը կը մեղմուէր, այնպէս որ շատ մարդիկ թագաւորին սպաւնացած պատուհասներէն կ'ազատուէին, ուրիշ շատեր ալ պարգևներով կը վարձատրուէին։

Հայաստանէն Հրանտ անուն երիտասարդ մի եկած յառաջ էր այս թագաւորին պալատը։ Այս երիտասարդը Հայաստանի թագաւորներէն միոյն զաւակն էր, զորոնք թագաւորին գաղանօրէն յղացած ըլլալուն, ծնածին պէս ծեփեալ սնտուկի մը մէջ դրած ու ծովը նետել տուած էր. բայց և յանդէպս թագաւորին ձեռքն անցնելով մանուկը պալատին մէջ սնած ու մեծցած էր։ Խիստ գեղեցիկ էր այս երիտասարդը ու չքնաղ կերպարանքով զարդարուն, և այնպէս բարձր առաքինութեանց տէր, որ տեսնողը, թէպէտև ստորին վիճակի մէջ, զանի անարկայ թագաւորի մը հարազատ զաւակը կը կարծէր։ Տեղւոյն լեզուին քաջ ընտելացած Հրանտ՝ Սուլէյմանի պալատին աւագորեարը իրեն բարեկամ ստացաւ, և զինուորական իրաց մէջ այնչափ քաջահմուտ ցուցուց զինքը որ մինչև թագաւորը զանի իր սպասաւորութեան մէջ կարգեց. իսկ երիտասարդը երեք տարուան մէջ թագաւորին աչքին լոյսին պէս սիրելի եղաւ և մեծամեծ շնորհք գտաւ անոր առջև. մինչև անգամ թագաւորին խիստ մերձաւոր ու վաղեմի ազնուականները չկրնալով քաշել՝ սկսան իրենց արտունչները Բէպիքէին յայտնել, որպէս զի թագաւորին խօսի և իմաց տայ թէ՝ այսպիսի օտարական մի և ստորին աստիճանի մէկը իրենցմէ աւելի նախապատիւ դառնալը ոչ արքային և ոչ իրենց երկար ծառայութեանը չվայելեր։ Երբոր առիթ մի պատահեցաւ, աղջիկը իմացուց թագաւորին իր աւագանւոյն տրտունջները. իսկ թագաւորը պատասխանեց անոր ըսելով. «Աղջիկս, մարդոյ մէջ ընտրութիւն ընելը հին փորձառութեամբս այժմ շատ լաւ գիտեմ, գիտեմ նաև հաղարաւորներ արժանի մարդուն յարգը. ուստի եթէ ես Հրանտը կը յարգեցի գիտական տեսակէտով նայելով՝ այդ ամեն ներքին զարգացման և զօրութեան միջոցներն ինքնին բաւական չլինելով; հարկ է նաև ուրիշ տէրութեանց, մանաւանդ իրեն մերձաւորաց հաւանութեանն արժանանալ. որ այնքան դիւրաւորին կ'երևի որքան մեծ տէրութիւններն եւրոպական հաւասարակշռութեան նախանձախնդիր կը մնան։ Մանաւանդ Ռումանիոյ նման երկրի մը համար, որ իւր ներքին զարգացումէ, արդէն ինքզինքն կառավարելու ընդելացեալ վարժութենէ, թէև փոքրագիր՝ այլ մշտապատրաստ և արիւն բանակ մ'ունելէ զատ. Եւրոպիոյ միջավայրին մէջ 5 միլիոն բնակչաց կարևոր դիրք մի ունեցող երկիր է։ Եւ ահա այսպիսի փոքրիկ և ծանրակշիռ նպատակ մի ունի Պ. Պրաթիանոյի ուղևորութիւնն, որ անշուշտ կրնայ արդիւնաւոր վախճան մի առնուլ եթէ Ռումանական իշխանութեան պետական անձինք ևս յայտնին անվրէպ ուղղութիւն մի տալ ազգային շարժման, և յարատևեն իսկ երկրին բնական զարգացման միջոցներն իրացնելու։ Այս ևս տարակուսական չէ քանի որ ունին այնպիսի պետական անձինք՝ որոց սուր խոհակաութիւնն ու հայրենասիրական ոգին սակաւ ժամանակի մէջ այսչափ գոհացուցիչ արդիւնք յառաջ բերին իրենց հայրենեաց։

—Յունական խնդրոյն համար նոր կազմուելիք գիտական յանձնաժողովոյ մէջ, որ պաշտօն պիտի ունենայ Թուրքս—Յունական սահմանագիծը որոշել, Բ. Դուռն ալ պահանջեր էր որ իր կողմանէ փոխանորդ մը ունենայ նոյն յանձնաժողովոյ մէջ. սոյն պահանջումը տէրութեանց մէկ քանին չ'են ընդունած։ Պ. Ֆէլի լրագիրը այնպէս կը կարծէ թէ Անգլիոյ դեսպան վսեմ. Հ. Լէյըրտ ծանուցագրով մը Բ. Դրան իմացուցած է տէրութեանց մերժումը։ Անգլիան ալ այս մերժման ժամանակիս է եղեր։

Ընկերութիւն մը առաջարկած է Բ. Դրան

(1) Ճիամպատիսթա Ճիրալտի իտալացի նշանաւոր ողբերգակ բանաստեղծի երկասիրութեանց գրեթէ հիսնակերտն է սոյն վեպը։

Տրիպոլսոյ առջև նոր նաւահանգիստ մը շինելու։ Այնպէս կը հաշուեն թէ այս գործին համար 94,000 օսմանեան ոսկի ծախք պիտի ըլլայ։ Տրիպոլսոյ քաղաքապետութիւնը այս ընկերութեան յանքերուն պիտի օժանդակէ · ամեն իւր հասոյթէն 5000 ոսկի անոր տալով։ Այս առաջարկը ինչպէս նաև նոր շինուելիք նաւահանգստին յատակագիծը Բ. Դրան ղրկուած ըլլալով, նա ևս պետական խորհրդոյ յղած է քննութեան համար։

—Սուրիոյ կուսակալ վսեմ Միտհաթ բաշան, իմանալով որ Հրէայ հասարակութիւնը Դամասկոսի մէջ օրինաւոր դպրատուն մը չ'ունի, նոյն հասարակութեան մեծերուն հրաւէր ըրած էր որ այս անհրաժեշտ պէտքը լրացընելու միջոցները ընձեռեն։ Բայց ասոնք հասարակութեան աղքատ և կարօտ վիճակը ծանուցանելով կուսակալին, Միտհաթ բաշան հրաւէր ըրաւ մօսիւ Քամանտոյին որպէսզի օգնութիւն ընէ այս պարագային մէջ նոյն հասարակութեան։ Այս հրաւէրին վրայ Մօսիւ Քամանտոն 1000 ոսկի պարգևեց դպրոցի մը հաստատութեան նպատակաւ։ Իւր կողմանէ Իսրայէլական ընկերութիւնն ալ ծանոյց Միտհաթ բաշային, որ այս գործին համար տարուէ տարի 4000 ֆրանք պիտի տայ։ Այսպէս Միտհաթ բաշայի ջանիւք և շնորհիւ, քիչ ատենի մէջ Հրէայք օրինաւոր և բարեկարգ դպրոց մը պիտի ունենան Դամասկոսի մէջ։

—Վագըֆ լրագիրը կըսէ թէ Կ. Պոլսոյ Իտալական դեսպան կոմ Քօրթիի, Բարիզի դեսպան նշանակուած ըլլալուն լուրը հաստատուած չէ։ Նորին վսեմութիւնը Գարատաղի իշխանին պատասխանին կըսպասէ, զայն Բ. Դրան ներկայացընելու համար, և անմիջապէս յետոյ դէպի Իտալիա ուղեւորութիւն մը պիտի ընէ արձակուրդ մը ստանալով։ Վագըֆ կ'աւելցընէ նոյնպէս թէ այն պարագային մէջ որ Բ. Դուռը մերժէ հաւանութիւն տալ Գարատաղի հակառաջարկութեանց Իտալիան ալ պիտի սահմանի իր այս խնդրոյն մէջ ունեցած միջամտութենէ ետքաշուիլ։

—Քրճալիի մէջ տեղի ունեցած ապստամբութիւնը մարած է։ Ակէ եկած տեղեկութիւնները այնպէս կ'եզրակացընեն թէ՝ այս ապըստամբական շարժումը՝ որնոր այնքան չափազանցօրէն պատմուէր էր, Պուլղարներուն իսլամաց դէմ ըրած բռնաբարութիւններէ ծագած էր։ Ասիկա կը հաստատէ նաև Ադրիանուպօլսոյ կուսակալ Բէուֆ բաշայի ղրկած տեղեկագիրը։ Բ. Դուռը այժմ Արևելեան Ռումելիի ազգային զինուորութեան գլխաւոր զօրապետ Սթրէքէրի տեղեկագրոյն կըսպասէ։

—Հետևեալ դէպքը կըպատմէ Դանուբ Վիէնայի լրագիրը · Յովսէփ արշիդքսին բացակայութեան ժամանակ նորին սենեկին մէջ գողմի մինչդեռ գողցողները կը խառնէր, սենեկապանը վրայ կը հասնի։ Զարագործը ոդի ի բուն կը յարձակի սենեկապանին վրայ ըմբշամարտի ձեռին, և մինչդեռ զանի տապալելու վրայ էր՝ կը հասնի արշիդուքսն։ Զարագործը հրաղէնին բերանը կը դարձուցանէ դէպ ի նա, սակայն արշիդուքսն կը յայտնի նորա զինեալ ձեռքը բռնել։ Անմիջապէս կառավարութեան ձեռքը կը մատնուի չարագործը։

—Սիամի թագաւորը առաջիկայ ապրիլ տասնոյ սկիզբները կ'ուղեւորի յայցելութիւն Եւրոպայի գլխաւոր տէրութեանց մայրաքաղաքներուն և Միացեալ—Նահանգաց։

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎ.

Կ. Պոլսոյ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն տեղւոյս Ազգ. վարչութեան ուղղեալ նամակաւ և յատուկ կոնդակաւ կը գուժէր, Վանայ, Աշչիերտի, Պայազիտի սոմն, և կը հրաւիրէր որ համայն ազգայինք իրենց ողորմութեամբն օգնեն Հայաստանի սովատանջ ազգայնոց և մխիթարեն զանոնք։

Մեր Գեր. Առաջնորդ Ս. Հայրն սոյն տագնապին վրայ Ազգ. վարչութեան խորին ուշադրութիւնն հրաւիրելով ջան ի գործ արկանել ոկսան։

Անմիջապէս կիրակի օրն Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ մէջ Պատրիարքական կոնդակն կարդացուեցաւ, և Գեր. Ս. Առաջնորդն քարոզ խօսելով ժողովրդեան, այնպիսի սրտաշարժ կերպիւ նկարագրեց Հայաստանի մեր եղբարց կրածտառապանքն ու մահամերձ վիճակը՝ մինչ զի համայն ժողովուրդն զգածուելով կ'արտասուէին։

Հետևեալ օրն Ազգ. վարչութիւնն փութաց յատուկ ժամնախումբեր կազմել ուրոյն արանց և ուրոյն տիկնանց դիմելու համար։

Արանց ժամնախումբի անդամքն են.

Արժ. Տ. Մակար Ծ. վարդապետ Բարխուդարեանց

Մեծ. Մ. կարապետ էֆ. Ա. Սպարթալեան, որ միանդամայն Ազգ. Քաղ. ժողովոյ Ատենապետն է

«Մարտիրոս էֆ. Բաբաղեան Ազգ. Քաղ. ժողովոյ անդամ.

«Մ. Գէորգ էֆ Ակասեան, Տնտես. խորհրդոյ անդամ։

Տիկնայց Մասնախումբի անդամքն են,

Տիկին Սրբուհի Թ. Աւագեան

« Սրբուհի Մ. Թէքպէյրքեան

« Իսկուհի Խ. Աղաղարեան

« Վարդուհի Գ. Զիլինկիրեան

« Մարգարիտ Աղաճանեան

Սոյն տիկնայք իրենց օգնական առած են նաև

Օր. Կուռնէլիա Բաբաղեան

« Մարիամ Յ. Գարագաշեան

Այս երկու ժամնախումբերն եռանդագին շրջագայելով մի քանի աւուրց մէջ գրեթէ ամեն կարող ազգայնոց բնակութիւնները, ըստ որում կարի սակաւաթիւ են, նոցա դիմումը խնդրեցին Հայաստանի սովելոյ համար։ Փութացին ազգայինք իրենց լուսայն յօժարամիտ տալ, որք արդէն ուրիշ ժամնախումբի մը ևս, որ Հայաստանեայց ազգ. ընդ. հանգանակութեան համար կազմուած էր, տուած էին։

Այս կերպիւ հաւաքուած արդիւնքն 1081 արծաթ մէճիտ, (որ լրագրոյս նախընթաց թերթին մէջ սխալմամբ 750 և կրկին սխալմամբ ոսկի գրուած էր) Ազգ. վարչութիւնն փութաց հաստատել ի Պատրիարքարան։

Այսչափով գոհ չլինելով մեր Գեր. Առաջնորդ Ս. Հայրն և Ազգ. Քաղ. ժողովոյ Մեծ. անդամք հոգ և խնամ տարին ուրիշ ժամնախումբ մի ևս կազմել խառն ընդ օտարաց, որպէս զի քաղաքիս մեծահարուստ և պատուաւոր օտարազգաց դիմելով նոցա դիմումն ևս հայցեն։

Սոյն ժամնախումբս կազմուեալ անդամքն ըստ հրաւիրանաց Գեր. Առաջնորդ Ս. Հօր յազգային առաջնորդարանն նիստ գումարելով երեք ճիւղերու բաժնուեցան հետևեալ կերպիւ,

Ա.

Մեծ. Ցրէտերիչի, հիւպատոս Պելճիքայի
» Ս. Բէտէյլ, տեսուչ երկաթու. Ղասապայի
» Թագուոր էֆէնտի Սպարթալեան
» Մատթէոս էֆէնտի Պայլոզեան

Բ.

Մեծ. Բոլիքարբօ Պարի
» Նիսիմ Թարանթօ
» Մ. Կարապետ էֆ. Արապեան
» Ղուկաս էֆ. Եսայեան

Գ.

Մեծ. Հայնց, տեսուչ Օսմանեան դրամատան
» Բսիաքի էֆէնտի
» Տօքթօր Պ. Կոստանդ
» Խաչատուր էֆ. Զաքիեան։

անմիջապէս դնաց Բէպիքէի սրահը և խիստ վայելուչ խօսքերով ու ազնուութեամբ հօրը պարգևը տուաւ անոր։ Օրիորդը առաւ դայն շնորհալի կերպիւ, ու ըսաւ թէ շատ դեղեցիկ պարգև մ'էր այն, և իրեն խիստ հաճելի՝ իր թագաւորահօրը կողմէն եկած ըլլալուն, բայց և աւելի սիրուն՝ այնպիսի մէկումը հետ՝ ինչպէս որ ինքն էր, ղրկուելուն համար · զի շատ օրերէ ի վեր էր որ զինքը տեսնելու ու հետը խօսելու սաստիկ փափաք մ'ունէր։ Այսպէս մէկ խօսքէ միւսը անցնելով, ինչպէս ընտանեկան խօսակցութեանց մէջ սովոր են, երկար տեսակցութիւն ունեցան, և վերջապէս թոյլտուութիւն խնդրելով երիտասարդը դարձաւ իր տիրոջը քով։ Բայց անոր պատկերն ու երևակայութիւնը Բէպիքէի սրտին մէջ այնքան խորին տպաւորեցաւ, որ թէպէտ հեռի իր քովէն՝ սակայն որպէս թէ գիշեր ցորեկ աչքին առջևը կընկատէր զանի։ Նաև անոր գեղեցիկ յատկութիւններն իր մտքին մէջ ցոլացնելով՝ թուեցաւ իրեն թէ հօրը տուած մեծամեծ դովեստները, համեմատութեամբ երիտասարդին ընտիր և շնորհալի ձիրքերուն, խիստ թերի էին։ Ահա այնչափ վեհ և չքնաղ երևցաւ նմա հայկազն Հրանտ այս առաջին տեսակցութեան մէջ։ Հրանտի անունը, որ քիչ մը յառաջ պալատականներուն բերած գանգատներովը տաղտկալի էր իրեն, հիմա այնչափ խանդաղատելի եղած էր՝ մինչ զի միայն անոր անունը յիշատակող խօսքերն քաղցրը էին իրեն լսել, ուրիշ որ և իցէ խօսքերու առջև մեծ դժկամութիւն ցոյց կուտար։

Արդ մինչդեռ Բէպիքէի միտքն այս խորհուրդներուն մէջ կը ծփար, հայրը եկաւ իրեն դաստնի ճամբով մի ինչպէս սովորութիւն էր։ Սիրոյ ակնածութեամբ ընդունեց զանի և ղրկած պարգևին համար շնորհակալ եղաւ։ Քանի մը խօսքերէ ետև հայրն ըսաւ անոր։ «սիրելի աղջիկս, ի՞նչպէս թուեցաւ քեզի Հրանտ, իր վրայ ունեցած հմարուսիս արժանաւոր չէ՞։» Պատասխանեց Բէպիքէ։ «Այո՛, պատուոյ արժանի մէկն է, բայց հայր իմ, ներեցէք համարձակութեանս որ խորին ակնածութեամբ ըսեմ ձեզի, պէտք չէ՞ որ անոր պատճառաւ ուրիշներուն ցուրտ աչօք նայիք։» Այսպէս խօսեցաւ Բէպիքէ որպէսզի մի՛ գուցէ հօրը միտքը կասկած մտնելով իր բաղձանքին խափան ըլլայ և եթէ երբէք բան մի նշմարած է՝ անկասկած և միամիտ մընայ։ Մէջերնին ուրիշ քանի մի խօսակցութիւն ներ ալ ըլլալէ ետև՝ թագաւորն իր սենեակը քաշուեցաւ, և ուրիշ առիթներով քանի մը անգամ ևս Հրանտը իր ազգական ղրկելու անփոյթ չեղաւ · կարծես թէ՝ ինչպէս տէրութեան գործերը անոր յանձնած էր, նոյնպէս իր աղջիկն ալ անոր վստահութեամբ կը հաւատար։

Հրանտ՝ այժմ աւելի յաճախ երթալով Բէպիքէի տեսութեան, և շատ անգամ աչքերն անոր վրայ դարձուցանելով սիրոյ կրակը իր սրտին մէջ ևս սկսաւ վառիլ, արդէն կ'զգար իր ներսի բորբոքը։ Զի ինչպէս ինքը Բէպիքէին աչքին աշխարհիս առաջին փառաղուն երիտասարդը երևած էր, փոխադարձաբար Բէպիքէ ևս իր աչքին գեղոյ և շնորհաց աստուածուհի մի կ'երևար։ Թշուառը իր կրից խաղալիկը եղած՝ ուրիշ բանի չէր բաղձար բայց միայն զի անոր հիացուցիչ դեղը շարունակ նկատելու կարող ըլլայ։ Անէծք կը կարդար իր բազդին որ զինքը արժանի չէր բրած այնպիսի հնաշխարհիկ կնոջ այր ըլլալու։ Բայց և այնպէս՝ երբէք նշան մի ցոյց չտուաւ, որով ոչ օրիորդը և ոչ նորա սպասուհիները կարող չեղան իր սրտի խորհուրդը հասկնալ։ Անգամ մի ինքը և օրիորդը սենեկին մէջ առանձին գտնուելով՝ օրիորդին սիրահար սրտին քանի մ'ակնարկները նշմարեց, ուստի ինքն ևս իր կողմանէ վայելուչ եղած նշանները զգալի ընելով ուզեց խմացուցանել թէ, եթէ նա իր վրայ սիրոյ կայծ մի ունէր, ինքն անոր սիրովը արդէն ի ներքուստ կրտոչորուէր։ Սիրոյ այս գաղտնի եղանակը ժամանակ մի իրենց մէջ շարունակուեցաւ · որուն մէջ երկուքն ալ կենդանւոյն կայրէին · զի ծածուկ կրակը յայտնի բոցէն աւելի կիզող է։ Իրերը հետզհետէ ընթանալով այս երկու տարփաւորներուն մէջ, օրիորդն՝ որ իր սեռին տկարութեան պատճառաւ երիտասարդին զօրաւոր ժուժկալութեան չէր կրնար հաւասարիլ, միանդամայն զգալովոր ինքը հասած էր այն կէտը՝ ուր հարկ էր կամ զինքն ուտող սիրոյ բոցը յայտնել ընտանին, կամ մեռնիլ · ուստի օր մի՝ որ դարձեալ Հրանտին հետ միայնիկ կը գտնուէր, աղնուագոյն ամոթխածութեամբ կասկարմիր կը-ռուած՝ մեղմիկ ու դաշն ձայնով մի սկսաւ այսպէս խօսիլ անոր։

«Հրանտ, թէ որ բաղդը իր բարիքները չինչ

Հայաստանի սովելոց Մասնախմբին սոյն երեք ճիւղերու իւրաքանչիւրն իրեն համար ուրոյն օր և ժամ որոշելով կը շրջագային ընկերակցութիւն մեր գեր. Առաջնորդ Ս. Հոր պատուաւոր օտարազգայ ողորմութիւններն հաւաքելու։ Կ'իմանամք թէ՝ մինչև ցարդ եղած արդիւնքն 2200 մէճիտի կը հասնի։

Մասնաւոր գովութեան և ազգային յատուկ շնորհակալեայ արժանաւոր են յիրաւի վերոյիշեալ բոլոր մասնախումբերու Մեծ. անդամք և տիկնայք, որք անձանձիր աշխատեցան սոյն մարդասիրական հանգանակութեան մասին։ Մանաւանդ կրկին շնորհակալեայ արժանաւոր են մեր գեր. Առաջնորդ Ս. Հայրն և Ազգ. Գաղ. ժողովոյ Մեծ. անդամք, որք ամեն ջանք ի գործ դրին, և ամենայն օրինաւորութեամբ սոյն մասնախումբերն կազմեցին, իսկ Ս. Նախագահն մինչև անգամ անձնական ներկայութեամբն և. Մասնախմբի երեք ճիւղերուն հետ միասին ընկերակցաբար շրջագայելովն մեծապէս քաջալերեց թէ՝ զիրենք և թէ՝ օտարազգի վերհանձն նուիրատուներն, որով և Հայաստանի մեր սովեալ եղբարց համար Զմիւռնիոյ մէջ բացուած հանգանակութեանց արդիւնաւորման շարժառիթ հանդիսացաւ։

Մտադիր եմք յայնորդ թերթով հրատարակել բարեսէր նուիրատուաց ցուցակը, սակայն մասնաւոր յիշատակութեան արժանի կը համարիմք քաղաքիս Եւրոպացի Տուներէ ամենէ հին, պատուաւոր և աղնուական Վուիթէլ Գերդաստանի նուէրն, որ մասնախմբին՝ իրեն երթալուն ցպասելով, բարեհաճած է սովելոց համար 20 օսմանեան լիրայ յղել առ Գեր. Առաջ. Ս. Հայրն։

ՑԱՐԵԼԻՔ(1)

Նո-էր Բարեպաշտ ԹոլՁԷրեան Զմիռնիոյ Ս. Լ. Հիանդանոցի Հայոց 1879 թուականին

Վեհամ. եղբարք Սպարթալեան	1000,
» » Եսայեան	330,
» » Պալեօղեան	330,
» Եուսուֆ Ց. Զելէպի	660,
Մեծապատիւ Տեարք,	
Գաբրիէլ Սիվրիսարլեան	75,
Ստեփան Աղաղարեան	33,
Եղբարք Գոյումճեան	100,
Հայկ Աղաղարեան	33,
Պետրոս Պաբբրճեան	65,
Դերձակ Հեգնայ	16,20
Նուպար Տիրացուեան	33,
Մկրտիչ Վարդանեան	33,
Եղբարք Զաքրեան	99,
Յակոբ Զանաքքալէլեան	39,20
Եղբարք Գասպարեան (Եաղմանճի)	66,
Օհան Բաքլաւաճեան	33,
Եղբարք Աղաճանեան	33,
Սարգիս Ճերմակեան	33,
Օհան Շահումեան	165,
Մեսրոպ Աղաղարեան	66,
Յովհաննէս Աղաղարեան	16,10
Յարութիւն Աքշէհիրլեան	16,20
Գրիգոր Մարտիկեան	33,
Եղբարք Ակասեան	99,
Յակոբ Հայրապետեան	16,10
Ստեփան Աղաճանեան	50,
Ղուկաս Ջուլֆայեան	16,10
Յովհաննէս Յակոբեան (Թիւլպէնտճի)	16,10
Եղբարք Պաբբրճեան	33,
Սարգիս Սէֆէրեան	165,
Սարգիս Սիվրիսարլեան	16,10
Սարգիս Զէլիկեան	33,
Սիրաք Սուքիասեան	16,10
Կարապետ Յակոբեան	66,
Կարապետ Սպարթալեան (Եաղմանճի)	16,20
Ստեփան Իվրիկճեան	33,
Մ. Կարապետ Ա. Սպարթալեան	33,
Թագուոր Պարտիզպանեան	33,
Կարապետ Սերչօեան	66,
Աւետիս Աքշէհիրլեան	33,
Ստեփան Փանոսեան	33,
Եաղուպ Պասմաճեան	16,20
Տիրացու Մատան	8,10
Եղբարք Ոսկանեան	66,
Պաղտասար Սուքիասեան	33,
Յակոբ Սէրայտարեան	32,20
Սարգիս Իշխանեան	32,20
Մարտիրոս Դանիէլեան	16,10
Եղբարք Պարծանքեան	165,
Կոստան Սուքիասեան	33,
Եղբարք Կիւլպէնկեան (սեղեան)	66,
Յակոբ Մելեմէթճեան	88,
Կիւլպէնկ Կիւլպէնկեան	66,
Լաղար Ներսիսեան	66,
Եղբարք Մարկոսեան	66,
ԸՀԵԼ ՕՂԼԸ	33,
Եղբարք Մուրուքեան	66,
Յարութիւն Փիլիպոսեան	16,10
Մկրտիչ Հալէպլեան	33,
Պետրոս Մաղաղաճեան	16,10
Յովհաննէս Քէչեեան	33,
Յարութիւն Անանիաեան	5,
Եղբարք Բարունակեան	33,
Ստեփան Գուշատալեան	7,20
Յակոբ Սարգիս Սպարթալեան	33,
Յովհաննէս Մարտիրոսեան	16,20
Ստեփան Թէստերէճեան	33,
Ճանիկ Էլմասեան	65,
Սարգիս Սիմոնեան (սահաթճի)	33,
Յարութիւն Ոսկանեան	65,
Սիմոն Թէքպէյլքեան	66,
Մարտիրոս Բաբաղեան	33,
Յովհաննէս Գամպուրեան	16,
Յունան Էֆէնտի	16,
Ստեփան Սանաքքեար	8,10
Աւետիս Պոյաճեան	66,
Եղբարք Զաքրեան	99,
Խաչատուր Վէմեան	33,
Եղբարք Մերկերեան	99,
Գրիգոր Զիլինկիրեան	33,
Եղբարք Վարպետեան	165,
Յարութիւն Գարագաշեան	33,
Աբրահամ Կ. (սարաֆ)	33,
Փիլիպոս Պուլտրլեան	33,
Կարապետ Գրիգորեան	33,
Յովհաննէս Նուպարեան	50,
Հայրապետ Դաւիթեան	33,
Հաճի Յովսէփ Նպարավաճառ	16,20
Մերիճան Տեբիշեան	16,20
Ստեփան Նուպարեան	77,20
Մեսրոպ Ղաղարոսեան	16,10
Հաճի Յակոբ (սահաթճեան)	20,
Խաչատուր Եղիսեան	8,10
Նուպար Յարութիւնեան	7,
Պօղոս Պէրկամալեան	175,
Թագուոր Ղաղարոսեան	8,10
Յակոբ Պալըքճեան	33,
Սիմոնեան և Բաբաղեան	66,
Խաչատուր Մսերեան	33,
Եղբարք Աւագեան	99,
Թագուոր Բաբաղեան	10,
Արմենակ Կոստանդեան	33,
Կարապետ Արապեան	132,
Մկրտիչ Յակոբեան	16,10
Գրիգոր Կարապետեան	33,
» Սահաթճի	16,20
Տիգրան Կարապետեան	16,20
Կարապետ Փալանճեան	8,20
Ստեփան Թուլումպաճեան	8,10
Օհան Շահվէքքէլեան	33,

(Մնացեալն յաջորդ թուով։)

(1) Տես լրագրոյս 1137 թիւը։

մէ ղլացաւ առաքինութիւնն՝ անոր քեզի ըրած անարդանաց հատուցում ըրած է իր բաղմաթիւ և վեհ զարդերովն քեզ առատաձեռն հանդիսանալով, մինչդեռ բաղդը քեզ ապրատ ու նուաստ վիճակի վերածեց, առաքինութիւնն իր անմահ պարգևներովն զքեզ այս պալատին առաջին փառաղուն երիտասարդն ըրաւ, այս պալատին, կ'ըսեմ, որ աշխարհիս վրայ այսօրուան գտնուած ուրիշ բոլոր արքունեաց մէջ չեմ կարծեր թէ ասիկա քեզի՝ ամենէն նուազ արժանին ըլլայ։ Առաքինութիւնն քեզ այնպէս բարձրացուց, զի դուն օտարական՝ և թշնամի ազգի զաւակ թէպէտ՝ այլ ինչպէս իմ թագաւոր հօրս աչքին՝ բոլոր իր աւագանիին մէջ առաջինն ու նախապատիւն արժանապէս եղած ես, նոյնպէս և ինձ սիրելի՝ որևիցէ ուրիշ անձէ մի յոյժ առաւել, իբրև այն միակ արժանաւոր անձը, որ անմահ աստուածոց կամքովը իմ կենացս տէրն ու ստացիչը ըլլալու սահմանուած է։ Ուստի թէպէտ իմ բարձր աստիճանիս, որուն մէջ կը գտնուիմ, մանաւանդ արքայազն օրիորդիս անպատշաճ էր այսպէս խոնարհիլս պաղատանք մատուցանել, սակայն քու վրայ ունեցած սիրոյս բռնութենէն յաղթուած, և չկրնալով ուրիշ կերպիւ միաքս քեզի հասկցունել, առաւել ընտրեցի անձամբ բանալ քեզի սիրոս օրինաւոր կերպիւ քուկդ ըլլալու փափաքով, քան թէ լռելով սկսիմ ներսէս ծիւրիլ ծնգիլ ու քեզմէ պուրկ ըլլալուս հալմանշ մեռնիլ թշուառապէս։ Դիտցիր ուրեմն, որ այն օրէն յորում այս պատուական մարդարտով (զի վիզը կախուած էր) հայրս զքեզ ինձ զրկեց, մինչև այս ժամս քու վրայ այնպիսի բոցավառ սէր մի զգացած եմ, որ չեմ գիտեր թէ ի՞նչպէս բաւեց զօրութիւնս այս բուռն կրակին մինչև ցարդ դիմանալ. և թէ որ այս հիմակուան սիրոս քեզի բանալս կարող ըլլայ այնչափ ազդելու սրտիդ՝ որչափ քու եղական շնորհքներդ ազդած են ինձ, չեմ երկբայիր բնաւ թէ՝ պիտի խոնարհեցունէ զքեզ հաճելու որ երկուքնիս մէկտեղ ամուսնութեան կապով միացած բոլոր կեանքերնուս մէջ ի միասին ապրինք։ Կը տեսնեմ այժմէն որ այս բանը իմ հօրս հաճելի պիտի չըլլայ. ինչու որ անիկա, նման այնպիսի մէկու՝ որ իր ընելու բանին բուն էական տարրին վրայ ուշադրութիւն չընէր երբէք, ագահութենէ ու ռամկային սին կարծիքներէ մղուելով պիտի ուզէ հակիլուրոր ոսկին ու փառասիրութիւնն իրեն պիտի առաջնորդեն կուրորէն։ Ուստի ես ինքնին քաջ համոզուած թէ իմ ապագայիս լաւութեան հոգն ու փայթն աւելի ինծի կ'ինայ քան ուրիշ որ և իցէ մէկու, նախամեծար կ'ընտրեմ որ հայրս ցաւի ինձմէ առաքինի ամուսին մի առնելուս համար՝ քան թէ ես ցաւիմ իրենմէ զիս այնպիսի մէկու մի տալուն համար՝ որ հաճելի չէ ինձ, ինչպէս որ գիտեմ անտարակոյս պիտի ընէ իսկ։ Կը յուսամ նաև որ ատենէ մ'ետև տեսնելով նա որ այս ընտրութիւնը անխոհեմ չէ և ոչ առանց հասուն խորհրդածութեանց, նկատելով միանգամայն որ եղածը եղած է, գոհ պիտի ըլլայ ըզքեզ իրեն փեսայ և զիս իրեն զաւակ ունենալ։ Իսկ համարելով թէ՝ բաղդն այնչափ ուժգին պիտի մաքառի ինձի դէմ, (թէպէտ չեմ յուսար) մինչև կամ հօր մը շնորհը թագաւորութեամբ հանդերձ կամ զքեզ կորսնցնել պիտի բռնադատէ զիս, ես աւելի կուզեմ քեզի հետ ապրիլ՝ որ այդ վիճակին մէջ անդամ միահեծան իշխանութեան մ'արժանաւոր ես, քան թէ ուրիշ մեծ թագաւորի մը հետ գուցէ աւելի իշխուելու քան իշխելու յարմար, և կը բաղձամ որ այս իմ խօսքերս այնչափ ազդեն քեզ որչափ քու զօրութիւնդ պատրաստ է ինձ ազդելու։»

Այսպէս խօսելէ ետև Բէպիքէ կեցաւ ուշադիր սպասել Հրանտի պատասխանին։

Բայց Բէպիքէի բոլոր ասոնք խօսելու ժամանակը հազարումէկ խորհուրդներ չարաչար կը յուզէին Հրանտի սիրտն այնպէս որ մէկ կողմէ իր տիրոջը պարտաւորուած հաւատարմութիւնն և անոր իր վրայ ունեցած սէրն զինքը կ'ազդուշացնէին այս բանէն, միւս կողմէ արքայազն օրիորդին՝ սէրն այնքան ջերմաջերմ խթաններովը կ'ազդէր իւր ոգւոյն, մինչև ամեն որ և իցէ ինչ մոռցընել կուտար, ու բոլոր նուիրական համարուած բաներուն իսկ վարկը նուազած էր իւր սիրոյն քով։ Այսպիսի խորհուրդներով յափշտակուած Հրանտ իր բոլոր զօրութիւնը վրան կը ժողվէ ու այսպէս պատասխան կուտայ։

(Շարունակելի։)

ՄԱՀԱԳՈՅԺ

Մեծ տխրութեամբ կը պարտաւորիմք յայտարարել արդոյ Պարոն Յակոբ Փափազեանի կանխահաս տխուր մահը։

Այս աշխոյժ երիտասարդը որ մօտ օրերս Ուսումնական խորհրդոյ անդամ անուանուած էր և Մեսրոպեան վարժարանի հոգաբարձութեան պաշտօնը կը վարէր, և իւր գործունէութեամբը կը խոստանար յ՚ապագային ազգին օգտակար ծառայութիւններ մատուցանել, կարճատև հիւանդութենէ ետքը առ Աստուած փոխեցաւ ի հասակի 32 ամաց անհնարին տրտմութեան մէջ թողլով իւր ընտանիքը և բարեկամները։

Հանգուցելոյն յուղարկաւորութեան հանդէսը ամսոյս 21ին խիստ փառաւոր կերպիւ տեղի ունեցաւ և քաղաքիս առաջնորդ դերտէր Մելքիսեդեկ սրբազանն խիստ սրտառուչ առենարանութիւն մի ըրաւ նորա դագաղին վրայ գեղեցիկ և հոգեւէտ խորհրդածութիւններ ընելով Քրիստոնէական հաւատոյ և յուսոյ վրայ և օրհնելով հանգուցելոյն ընտանիքը և բարեկամները։

Արժ. Փեսենտեան Տ. Գաբրիէլ քահանայն բնիկ սեբաստացի, որ դեռ տարի մի չկայ Հալէպի մէջ քահանայ ձեռնադրուելով քանի մի ամսէ ի վեր քաղաքիս մէջ քահանայութեան պաշտօն կ՚վարէր, ամսոյս 25ին առ Աստուած փոխուելով հետեւեալօրն ամենայն պատշաճութեամբ կատարեցաւ նորա քահանայական յուղարկաւորութիւնն։

Արժ. հանգուցեալն բնութեամբ հեզ և աղնիւ, և իւր սուրբ ասպիճանին սիրատենչ ոգւով յառած իւր պաշտօնը կը վարէր։ Յաւելի է արդարև Արժ. հանգուցելոյն երեսնամեայ հասակին պանդխտակեաց վախճանն, թէև քաղաքիս Ազգ. Հիւանդանոցին մէջ, և յեռոյ մասնաւոր անձի մը խնամովք մարդասիրապէս ժողովուած և պահպանուած էր։ Կ՚իմանամք թէ՝ ծնողք, երեցկին և զաւակներ ունեցած է իւր հայրենիքն, որոնց մխիթարութիւն կը մաղթեմք։

ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆ Ի ԶՄԻՒՌՆԻԱ

Ամսոյս 27ին Հայ ընթերցատան սրահին մէջ ընթերցատան Տնօրէն խորհրդոյ հրաւիրանօք բանախօսութիւն մի ըրաւ Մեծ. պարոն Յակոբ Կոստանդեան ի ներկայութեան բազմաթիւ հանդիսականաց։ Պ. Ատենաբանն իրեն նիւթ ընտրած էր «Ճշմարիտ յաջողութիւնն» զոր ընտիր կերպիւ բացատրեց օգտաւէտ խորհրդածութիւններով հանդերձ հաստատելով որ մարդը օրևէ ասպարէզի մէջ ճշմարտապէս կրնայ յաջողիլ եթէ ժրութեամբ աշխատութեամբ և հաստատամտութեամբ առանց յուսահատելոյ դէպի իւր նպատակը առաջ քալէ։ Հանդիսականք Պ. Ատենաբանին խօսքերն ծափահարութեամբ ողջունեցին, և ընթերցատան Տնօրէն խորհրդոյ անդամներէն մին հանդիսականաց կոչմանէ շնորհակալութիւն յայտնեց Պ. Կոստանդեանի իւր ատենաբանութեան համար։

ՔԱՆԱՔԱՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսիոյ կայսեր դէմ Մոսկուայի երկաթուղւոյն վրայ փորձուած դաւաճանութեան հեղինակ համարուող Հարթմանի՝ և Վօլֆէ— լրագրի խմբագրաց միոյն հետաւեալ խօսակցութիւնն ոչ միայն հետաքրքրական՝ այլ նաև օրուան իրադիրներու վերաբերեալ ինչ ինչ տեղեկութիւններ ևս մէջ բերելուն արժան կը համարիմք քաղաքիս էմբարիալ լրագրէն համառօտագրել։

Խմբագիր—Ի՞նչ է քու իսկական անուանդ։ Կրնա՞ս քու կենաց վրայ ինչ ինչ տեղեկութիւններ հաղորդել ինձ։

Հարթման—Իմանուն է Լօէա (Լուտովիք) Հարթման։ Ծնած եմ 1850ին Արքանկէլ քաղաքը։ Քանի մի օրէն 30 տարեկան պիտի լինիմ։ Հայրս Ալման վաճառական մ՚էր, 15 տարեկան էի երբ նա մեռաւ։ Հինգ եղբայրներուս կրտսերագոյնն եմ, կառավարութեան դպրոցի մը մէջ առաջին կրթութիւնը առի։ սակայն հօրս մահը զմեզ յետին չքաւորութեան մատնեց։ Ես ու եղբարքս գործ փնտրեցինք, արդէն հօրս վաճառատան մէջ առևտրական տեղեկութիւններու հմտացած էի։ Բէգրսպուրկի մէջ նորութեց վաճառատուն մի մտայ, յետոյ Բէոթոֆի քաղաքապետութենէ դրատուններէն միոյն մէջ պաշտօնի դրուեցայ։ Սակայն քաղաքական իրերու վրայ ճառ մի խօսեցած ըլլալուս հարկադրուեցայ ընդ փոյթ մեկնիլ այն քաղաքէն։ Անուս փոխեցի և դրամատան մը յառեցայ։ բայց իմանալով որ ոստիկանութիւնը հետամուտ է զիս ձերբակալել, խոյս տուի Թականրօք քաղաքը, ուր կեղծեալ անունովմի նախակրթական դպրոցի դասատու եղայ։ Հաղիւ օրապահիկս կը հաներէի։ Ուսի լքեցի այդ վիճակը ռուսական ազատութեան ցանձնաժողովին յառելու համար 1875—1876ին։ Շատ անգամ ձեռք ինկայ, և ամեն անգամ ղերծայ գաղտնօրէն։

Խմբ.—Ի՞նչ ըրիր 1875էն 1876։

Հարթ.—Խոհեմութիւնը չներեր այդ մասին որոշ պատասխան տալու քեզ։ Այսչափ միայն կարող եմ ըսել, որ դարձեալ կեղծ անուններով կառավարութեան պաշտօններ վարեցի Նոյնիսկ Ռուսիոյ մէջ։

Խմբ.—Ամուսնացած ես։

Հարթ.—Ոչ։

Խմբ.—Անցնինք Մոսկուայի երկաթուղւոյն վրայ կայսեր կենաց դէմ եղած դաւաճանութեան խնդրոյն, որ պատճառ տուաւ որ քեզ իշխող տէրութիւնն ուրիշ տէրութենէ զքեզ պահանջէ։ և զքեզ աշխարհածանօթ հռչակեց։

Հարթ.—Սոյն պիսի հռչակման փափաքող չէի ես։ Ինձ չափ երկչոտ ու համեստ մարդ չկայ։

Խմբ.—Ինձմէ առաջ՝ անգղիացի, գաղղիացի, ամերիկացի լրագրատուներ այցի եկան քեզ։

Հարթ.—Ոչ։ քանզի անունս և տեղս անծանօթ է։ և դու ես միայն՝ որ գտար զիս առաջին անգամ։ Եւ ինչպէս գիտես, այստեղ ինքզինքս պարտկած եմ Ժոն Ս. անկլօ—ռուս անուան ներքև։

(Շարունակելի։)

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վսեմափայլ Թագաւոր բաշա Յակոբեան Աղէքսանդրիայէն բարեհաճած է այս տարի ևս 70 զամբիւղ (3000 օխայի չափ) բրինձ յուղարկել Զմիւռնիա, ազգային տնանկ ընտանիքներու բաշխելու համար։ Գիտել արժան է որ Զմիւռնիոյ մէջ վաղնջական սովորութիւն կայ ամեն տարի սուրբ Զատկի աւագ շաբաթուան մէջ ազգային տնանկ ընտանիքներու ալիւր և բրինձ բաժնել ժողովրդեան կամաւոր ողորմութեանց հանգանակութեամբ, որ կը կատարուի Ազգային վարչութեան միջոցաւ։ Ժամանակիս ուտելեաց սղութիւնը, և թշուառ ընտանիքներու բազմութիւնը մինչդեռ զդալի կերպիւ կը ծանրանայր և դժուարին կ՚ընէր սոյն վաղեմի բարեպաշտական սովորութիւնը ըստ արժանւոյնս ործադրել, վեհափառ Թագաւոր բաշայի սոյն վեհանձնական շնորհն օգնութիւն հասնելով, յուսալիս եմք որ քաջալերի պիտի դառնայ մեր քաղաքի բարեսէր ազգայնոց, որ նոքա ևս առատաձեռնորհ նուիրօք ջանադիր լինին սղութեան և կարօտելոյ շատութեան պատճառաւ եղած դժուարութիւնն բառնալ, և չքաւոր ընտանիքներու կարօտութիւնն ըստ արժանւոյն լիացնելով՝ կատարել իւրեանց մարդասիրական պարտաւորութիւնն։

—Անցեալ շաբաթ օր ժամը 7ի ատենները քաղաքիս Ռէշիտիյէ փողոցին մէջ պատուաւոր հայազգի մը վրայ յարձակելով չարագործ մի, անտարակոյս յոյն, ոսկի ժամացոյցը, որ յոյժ ծանրագին էր, կը սեռն, յափշտակելով կը փախչի։

—Նոյն օրը Քաթրճի օղլու փողոցին մէջ ուրիշ պատուաւոր անձի մը վրայ յարձակեցան երեք չարագործք ը՝ը՝ի՝ ձեռին զանի կողոպտելու։ Քաջասիրտ անձը ձեռքի դաւազանի հարուածովը կը զդեռանէ անոնցմէ մին։ Այն ինչ դաշոյնով երկրորդն կը յարձակէր վրան, սա դաւազանի հարուածով զայն ևս դեռին կը տապալէ։ Դրացիներու ձայնէն ոստիկանութեան չորս պաշտօնեայք կը հասնին, բայց չարագործներն կը յաջողին փախչիլ իրենց ընկերին օգնութեամբը, որ քաջասիրտ անձին արիութենէ վեհերած ի բայի կ՚սպասէր։

—Քաղաքիս նաւահանգստին մէջ ցաւալի դէպք մի տեղի ունեցաւ երկուշաբթի օր։ Նաւակ մի դուրս ելնելու ատեն, ռուսական չոգենաւի մը, որ նաւահանգիստը մտնելու վրայ էր, խիստ մօտենալով կը դառնայ և երեք ուղևորներն ծովը կ՚ելնան։ Ասոնցմէ մին երկուսանամեայ մանուկ կիսեղդուի։ իսկ 2 կաղատին,

—Մեր նաւահանգիստն գտնուող իտալական երկու ֆրէկամներն Բալէարը և Վարէզ մեկնեցան, առաջինն Սէլանիկ իսկ երկրորդն Յամսերթալու համար կ՚ըսուի։

—Բարձր. կուսակալը երկու շրջաբերականներ յուղարկած է քաղաքիս հիւպատոսներուն, և նորին Բարձրութիւնն յիշեալ շրջաբերականաց միջոցն կ՚իմացնէ թէ՝ խստաբար արգիլուած է որ և իցէ պաճար(եղ, կով, հորթ) քաղաքէս դուրս հանել։ Միւսոցն կ՚իմացնէ նոյնպէս թէ փերեզակաց ոմանց դեղ վաճառելն օրինաց հակառակ լինելով, անոնք որ ետ չեն կենար այդ տեսակ դեղավաճառութենէ, տուգանքի պիտի ենթարկուին, և նոցա մօտ գտնուած դեղերն կառավարութեան միջոցաւ դրաւուելով հիւանդանոցներու պիտի տրուին։

—Վերջին շաբթուս Նիհատ էֆէնտի կարճատև հիւանդութենէ մ՚ետք իր մահկանացուն կնքեց ի սուգ համակելով իւր ամուսինն և բոլոր ծանօթներն։ Նիհատ էֆէնտի քաղաքիս քարտուղարութեան արքունի քիմիսէրի պաշտօնը կը վարէր, և իւր ազնիւ—բնաւորութեամբ հասարակութեան համակրանացն արժանացած էր։

—Կը հաստատեն թէ՝ Մատրիտի մօտերը ժէզուիթները հոյակապ դղեակ մի գնոյ առեր են 125,000 ֆրանքի արժողութեամբ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱՖԻՕՆ զկնի մեր վերջին թուոյն՝ բարձրացաւ ի գին 250 ղրուշի, և ՄԽայ հաստատ ի նոյն գին ցանցելուն շաբաթու վաճառեցաւ 39 կողով ի գին 250 ղրուշի։ իսկ յայսմ շաբաթու շուրջ 48 կողով վաճառեցաւ ի գին 250 ղրուշի։

ԲԱՄՊԱԿՆ ի հանդարտութեան պատնի։ վերջին շաբաթուս մէջ վաճառեցաւ շուրջ 100 հակ զտուած, լաւ տեսակէն ի գին 455 ղրուշի, և 100 հակ զտուած հասարակ տեսակէն 442 2/0 ղուրուշիկենդինարը։

ՍՈՒՍԱՄ շուրջ 10,000 օխայ վաճառեցաւ օխայն 128 փարայէն։

ԹԱՆՈՒՅՈՒՄ

ԵՐԿՈՒ ԲԱՆԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ա. Թշ—ա—ռ—ՐԻ—Ն և Գ—Ր

Բ. Դեղեցիկն և Գեղար—Խոտ

Ի Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆԷ

Սոյն 90 երեսէ բաղկացեալ մատենիկին մէջ Առաջին Տերևքի հեղինակն իւր բանաստեղծ զողարիկ լեզուաւ և իւր դասախարակ հետաքրքիր ոգւով կը բացատրէ և կը հաստատէ Գիծոյ և Գեղեցկի զգացումներուն ազգայնոց մէջ զարգացման պէտքն։

Կեդրոնատեղին է Կ. Պոլիս Եէնի Ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը, կը ծախուի նաև ուրիշ գրավաճառաց քով։ Գին 5 ղրուշ արծաթ։

Տէր լրագրոյս,
Ղ—կ— Գ. Պալեաղեան։

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏՅԱՆ